

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie مجموعہ علوم

ԽՐԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 30

Ամեն տարի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Զրանք: Թղթատարի ծախքը տնօրէնութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բոսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 105 դրուց:

ԲՈԼԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԳՐԱԿԱՆ. — Մատենախօսական. — Վեր. Հ. Ս. Երամեանի «Գործ. Գիտութեանց Բառարան»ը:

Ղ. ԲՈԼԱՏ. — Ծաղկերանական պէտքերով թիւներ. Վարդը. Մշակութիւն Ե. Իսկու թեան սրբարարութիւնը:

Ղ. ԲՈԼԱՏ. — Շերամարութիւնը Բաթթեօեան դրութիւնով Մակարուծային Փոխանակի հիւանդութիւններ. Փտախտ:

Ներ. Գ. ՆԻԿՈԼՈՍԵԱՆ. — Բուսաբանական. — Բոյսերու վերարտադրում:

Ղ. ԲՈԼԱՏ. — Զարտարարութեան. Ներկարարութիւնը: Բուրդ:

ՏԱՆՏԻԿԻՆԸ. — Խոհանոցի Բաժինը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ առ Խմբագրութիւն

Տ. ՊՕԶԱՃԵԱՆ. — Արքիմէտէսի Լծակը:

Թղթակցութիւն, Ազգ. Կըն.

Հասը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ. Ալի Ճաւահիր, Թիւ 44

Ա ա ա Ս ս ս Ղ
Մ մ լ Կ կ ո ո
Ե ե տ Ի ք է ո
Ր ր ւ Պ ք ն ո
Ի լ լ Ի ր Ի ա
Կ ա Թ Ո լ ա ծ
Ա Վ Ի Ն Ե ո ն

1—5 Ամերիկա
2—4 Սկիպիոն
6—3 Բուզնան

Լուծած են. Նիկոմիդիայէն Տկն. Սզնիւ
Գ. Բիւրտանն և Օր. Էօփէնի Նշանեան. —
Այսքէն Օր. Զապէլ Եսպրճեան. — Խմբու-
գիրք Բիւզանդիոնի՝ Մանուէլ և Զարէհ էֆ. ք
— Գարժապէն Ե. Յ. Էթմէքճեան էֆ. — Էր-
զրուէն Սուրէն էֆ. Յ. Ուզունեան :

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառգիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ
գործնական ոճով քննարկութեան, Վերաբաժնութեան,
Առողջաբանութեան, Ճարտարարուեստից, Բնաբա-
նութեան, Քիմիայի, Դեղերու. Բնական պատմու-
թեանց, Աստղաբանութեան, Երկրագործութեան և
այլ գիտութեանց վրայ :

Ըստ կարեւոր ժամանակն խնամք տարուած է բա-
ւերու ճշգրտութեան : Ընդարձակ բացատրութիւններ
կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց առեալ ա-
մէնէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւ-
թաց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպա-
կաս են : Այս աշխատութիւնը որպէս զի յինքեան կա-
տարեալ ԸԼԸՍ, հեղինակը իրեն առաջնորդ բռնած է
շատ մը հանրագիտական եւրոպական բաւարաններ :

Գիտական բառերու մասին առաջնակարգ թի-
կունք եղած է այս գործիս Վ. Հ. Փաշուկեայ Հան-
գիտական ընտիր բառագիրքն, իսկ բուսոց մա-
տին Վ. Հ. Ալիշանի Հայբանակն : Աւելորդ չէ համար-
ուած գիմելը նաև մասնաճիւղերու վրայ խօսող բեր-
քերու օգնութեան :

Հեղինակը խնամօք եւրոպական ընտիր գործերէ քա-
ղելով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն
զանոնք խմբադրած է մի հատորի մէջ՝ զորդարելով
ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով :

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութնամյայ թերթերու
մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հա-
րիւրորդամեղր, լայնք 16 հրմ. գրերն մանր և գիւր-
բնութեան :

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագրին է 20 սան.

Թիմ, ամբողջ գրքն 10 ֆրանք (—4 րուբլի, 2 տը-
լար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակու պէտք է փա-
փաքողն յղէ առ Տեսչութիւն Վեներաբիլ Մեթոար-
եան Տպագրատան. ապահովագրեալ նամակաւ եթէ
կ'ուզէ ընդունիլ թերթերը :

Թերթերն կը տրուին հինգ հինգ իւրաքանչիւր
անգամ : Խուսափանի և Տաճկաստանի համար յայտ-
նի է թէ լուսագրին է յանձնարարականաւ (recom-
mandé) շրկել : առ այս փափաքողն պէտք է 25 սան-
տիմ աւելի հաշուէ, որով բաժանորդագրողն վրայ ա-
ւելցնէ ֆր. 2.50—(12.50 ֆր., —5 րրլ. —4 ու կէս
տոլար) : վասն զի կորստեան պատասխանատու չէճե-
լու իւնը :

Տպագրութիւնը աւարտելէ վերջ, բառագրին գինն
պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բաց ի թղթատարի
ծախուց :

* Վերագրեալ ազդի վրայ՝ Հանրագիտակի բոլոր
Գործակալներու և Բաժանորդներու ուշադրութիւնը
կը հրահրենք, և կը յանձնարարենք Վեր. Հ. Ս. Ե-
րամեանի սոյն համարի և արդիւնաշատ գործը, որ ոչ
միայն ֆրանսագէտ հայերու, այլ միջեւ իսկ ֆառն-
սերէն չգիտացող ամէն Հայ գրագէտի, բանասէրի և ըն-
թերցատէրի համար կարեւոր է, և անոնց չափ և
աւելի կընան օգտուիլ այդ բաւարանի ուղղութիւնն.
քանի որ ամէն բառի տաճն պիտի գտնան ընդարձակ
բացատրութիւններ, լուսարանուած խնամաւորիկ պատ-
կերներով :

Մ. Ս.

Ա 2 Դ

Այս նոր տարիէն սկսեալ՝ Կէյվցի ծա-
նօթ Ֆիլիպ Աղան՝ որ իր պատուաւոր, գար-
ծունեայ ու աղնիւ բնաւորութեամբը բոլոր
զինքը ճանչցող պոլսեցոց և գաւառացոց
վաստհութեանն ու համակրանաց արժանա-
ցած է. նորէն վարձած է Թալիթա-Գալէի
Մուսթաֆա-Փաշա խանը, ինչպէս ելլող վար-
ձակալէն առաջ շատ երկար տարիներ, արդէն
ինքն էր նոյնին վարձակալը :

Ֆիլիպ աղան իր յաճախորդներուն հան-
գստութեան և անոնց առողջութեանն համար
թէ՛ չէնք վերէն վար և թէ՛ բոլոր հին կահ
կարասիները, վերմակ, անկողին, քառեօլաի
սէտիւրները, արժուները և թէ՛ ուրիշ պարտ
ու պատշաճ գոյքերը՝ ինչպէս նաև ջուրերու
ճամբաները և ձեմիշները բոլորովին վերանո-
րագած է, այնպէս որ իր յաճախորդները գո-
հացնելու և անոնց երթեւելը դիւրացնելու
համար ամէն զոհողութիւն յանձն առած է :

Մաքրութիւն, ապահովութիւն, հանգը-
տութիւն կատարեալ է :

ՄԷՆԱՖԻՒ ՈՒՄՈՒՄԻՑԷ

Պատիի թէչէքքիւնամէմ օլտուր քի,
Բէնտիւմ անասը իսթանպուլու օլտուլ, չալ-
ղըն էսնաֆընտան Արտաշէս Մեղրեանն,
մագոստը աճիպանէմ օլտուրքի՝ Խիւտանէ-
քէրտէ, Ալլահ քիմաէյէ չէքտիւմէսուն, պուն-
տան պիր քաշ սէնէ ագոսէմ կիրիֆթար օլտը-
ղըմ պէլ սօղուգլուղը վէ ֆրէնկի Խլէթի օլ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏԵՕՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՑ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 45

1899 ՅՈՒՆՈՒԱՐ 30

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Վ.ԵՐ. Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

ԳՈՐԾ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԲԱՌԱՐԱՆԸ


Շնորհակալութեամբ ստացած ենք Վենետիկի Մխիթարեան արդիւնաշատ Միաբանութենէն վերոյիշեալ գիտական Բառարանին ցարդ լոյս տեսած 20ի չափ պրակները, որ հասած է մինչև «foin» բառը:

Պարզ ակնարկ մը նետելով, կրնանք համոզուի՝ գոյացնել թէ՛ մինչև հոս՝ արդէն գործին ո՛ր աստիճան կարեւոր և օգտակար ըլլալը անուրանալի կերպով երևան ելած է: Իւրաքանչիւր բառի քով դրուած է իր հայերէն հոմանիշը, ոմանց ևս տաճկերէններն ալ, անոնցմէ կարելի տրնելու և խիստ շատերու վրայ երկար՝ և մինչև իսկ մէկ քանի էջեր գրաւող հմտալիր բացատրութիւններ, որոց պակասն ալ կուգան լրացնել մաքուր և խնամատիպ պատկերներ:

Մենք առ այժմ «Մատենադատական» մը չէ որ պիտի ընենք, քանի որ՝ տակաւին գործը աւարտած չէ. այլ մեր ընթերցող հասարակութեան մատանիչ ընել այդ հմտալիր աշխատութեան օգտակարութիւնը, որ իր տեսակին մէջ առաջնակարգ տեղ մը կը բռնէ շատ մը առաւելութիւններով: Ամէն օր լրագիր կը կարդաք, ինչպէս և կարգ մը մատենաներ, որոց մէջ կը հանդիպիք անշուշտ գիտական բառերու, բայց անոնցմէ ոմանց իմաստը չէք հասկնար — ակնարկութիւննիս անշուշտ չը գիտցողներուն համար է, — հետեւաբար ևս այդ յօդուածի մէկ քանի կարեւոր մասերը ձեզի համար մութի մէջ կը մնան, և անոր միտքը կատարելագէս չի հասկնալով, այդ յօդուածէն ալ համ չէք առներ: Բայց եթէ ունենաք ձեր քով այսօրինակ առաջնորդ մը, որու մէջ պիտի գտնէք անշուշտ կարեւոր ու հարկաւոր բացատրութիւններ, մտքերնիդ լուսութանուելով, ձեր հետաքրքրութեան գոհացում մը տուած պիտի կրնաք ըլլար, նոյն իսկ՝ շատ մը յօդուածագիրներ կամ տուելի թարգմանող յօդուածագիր,

ներ կը հանդիպին շատ անգամներ ան-
պիսի գիտական բառի մը, որու առջև
ժամերով անճրկած կը մնան, իմաստը
չեն հասկնար, սովորական բառարան-
ները՝ եթէ դրած են իսկ անոր հայե-
րէն հոմանիշը, իմաստը բացատրող ո-
չինչ կը պարունակեն, որով և միշտ կը
մնան միեւնոյն անստուգութեան մէջ։
Ահա այս տեսակ պարագաներու մէջ,
այդպիսիներուն համար, վեր. Հ. Ս.
Երամանի Հանրագիտական Բառարանի
նման աշխատասիրութիւն մը կարեւոր և
անհրաժեշտ գործի մը կը դառնայ։ Եւ
երբ այսպիսի ընդարձակածաւալ և բազ-
մեզուս դարձ մը 10 ֆրանքի տրոփողու-
թեամբ ժողովուրդի արամադրութեան
տակ կը դրուի, կ'արժէ որ ամէն ընթեր-
ցասէր իր գրադարանին մէջ ունենայ
տնկէ հաս մը, որ պարապոյ ժամերու
համար ալ ընթերցանութեան խիստ օգ-
տակար և յարմարագոյն առաջնակարգ
մատեն մ'է։

ԾԱՆԿԵԲԱՆԱԿԱՆ ՊԵՍՊԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ



ՎԱՐԴԸ



ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՍԿՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ

(Շարահանութիւն և վեր տեւ 44)

Թոյց բուն վարդի իւզը կը պատրաստեն
առանց տաքցնելու, բուսային իւզերով և
քաղցիւղով (կլիստին)։ Մետաղատայնէ շըր-
ջանակներ կը պատրաստեն, առանց վրայ կը
դնեն աղէկ տեսակէ ձէթի մէջ թաթիւուած
առուիներ (շախա), և այս վերջիններուն
վրայ կը տարածեն ծաղկանց թերթիկները։
Կ'առնեն նախ՝ շրջանակ մը՝ որու վրայ կը
փռեն առուին, ծաղիկները կը տարածեն, և
այսպէս պատրաստուած շրջանակները իրա-
րու վրայ գիզելով մամուլի (presse = պասիը

կամ ձէնտէրէ) տակ կը ճնշեն։ Վազած իւզը
կ'առնեն և կրկին առուիները մէջը թաթիւ-
լով կը տարածեն շրջանակներուն վրայ, ա-
նոնց վրայ ալ ծաղիկները, և այսպէս գործո-
ղութիւնը կը կրկնեն 10—15 անգամներ,
մինչև որ իւզը կատարելապէս յագեցնայ
արտաբոյրով։

Այժմ Եւրոպայի մէջ այս դրութեան հա-
մար ալ մասնաւոր գործիքներ հնարած են,
և փոխանակ ճարպի և իւզի, կը գործածեն
նաթաճարս (վազլին) քաղցիւղ, (կլիստին)
և խունամերձ (բառաֆին)։ Ճարպերը և իւ-
զերը շուտով կ'այլալին, կը ծթին, և հե-
տեաքար իրենց մէջ գտնուած խկութիւնն
ալ կ'այլալի։ Բայց միւսները՝ — նաֆթա-
ճարս և իւն — անվթար կը մնան, և իրենց մէջ
գտնուած խկութիւնն ալ անայսպէս կը սլա-
հեն։

Եւրոպայի մէջ կը գործածեն նաև կազա-
յին ծծումի դրութիւնը, որ հետեւեալն է։
Մասնաւոր գործիքի մը մէջ կը պատրաստեն
բնածխական թթու (ասիտ քառագոնիք),
ծաղիկները կը դնեն մետաղէ սնտուկի մը
մէջ, և խողովակով մը՝ բնածխական թթու-
տը կը մտցնեն այդ սնտուկին մէջ։ Երրորդ
ընդունարան մ'ալ կայ, որու մէջ լեցուած է
զօրաւոր ալքոլ։ Բնածխական թթուտը ծա-
ղիկներուն վրայէն անցած ատեն, անոնց խ-
կութիւնը կը ծծէ անմիջապէս՝ և ամբողջովին,
և երբ ալքոլին մէջ մտնայ, խկութիւնը հոն
թողլով, դուրս կ'ելլայ մասնաւոր խողովա-
կէ մը։

Արդէն՝ ճարպերու և իւզերու մէջէն ծա-
ղիկներու խկութիւնը քաղելու համար, ընդ-
հանրապէս ալքոլ կը գործածեն, որ առանց
ճարպը կամ իւզը իր մէջ հալեցնելու, խ-
կութիւնը միայն իր մէջ կը լուծէ։

Այս գործողութեան համար կը բաւէ մի-
այն իւզերը ալքոլի հետ խառնելով ցնցել շա-
րունակ մէկ քանի ժամեր։ Ուրիշ վերջը
հանգարտ թողլով, ալքոլը խկութիւնը ծը-
ծած՝ իւզին երեսը կ'ելնէ, որ դիւրութեամբ
կը զատուի իւզէն։ Իսկ ոչ պատրաստուած-
ները մանր մանր ջարդելով կը թողուն մէկ
քանի չաբաթ ալքոլի մէջ։

Այսպէս՝ երբ ալքոլը խկութիւնով խառ-
նուած պատրաստ ունենաք, կրնաք այլ ևս
թորանոցէ անցունելով խկութիւնը զատել,
եթէ զուտ ստանալ կ'ուզէք։

ՎԱՐԴԻ ԻՍԿՈՒԹԵԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԸ.—Այս խկութիւնը դեղնագոյն է, պաղ ալքոլի մէջ՝ խիստ փոքր քանակութեամբ կը հալի: Սովորաբար՝ 14—20 աստիճանի մէջ կարծր վիճակ մ'ունի՝ կարագի թանձրութեամբ. և այդ վիճակին մէջ, երբ զանգուածը ուշադրութեամբ նկատուի, ասեղնաձև սառոյցներու կը նմանի, փայլուն և առանց հոտի: Այդ բերեղները կը հալին՝ 25—28 աստիճան տաքութեան մէջ, որ կ'ստանայ կանաչորակ դեղին գոյն մը, և խիստ զօրաւոր հոտ մը կ'արտաբերէ, որ հաճոյալի չերևար իր այդ խտութեան մէջ. և այն ատեն միայն իր արտաբերյալ քաղցր և հաճոյալի կ'ըլլայ, երբ մեծ քանակութեամբ ալքոլի կամ ջուրի մէջ մէկ քանի կաթիլներ գտնուին: Ջուրի մէջ կոտորելապէս կը լուծուի, ինչպէս տեսանք թորումի մասին խօսած ատեններս. նոյնպէս տաքացումի կը լուծուի եռացող ալքոլի մէջ, որ երբ պաղի, մէջի խկութիւնը երկուքի կը բաժնուի, մին լուծուած կը մնայ ալքոլին մէջ, իսկ միւսը զատուելով, երեսը կ'եղնէ՝ բերեղացեալ սառոյցներու պէս:

Վարդի խկութիւնը՝ իր սղութեան պատճառաւ, գրեթէ անարատ չի գտնուիր, կամ հազուադէպ է. ընդհանրապէս կարգ մը խարդախութիւններու կ'ենթարկեն: Ամենէն սովորական խարդախութիւնն է՝ վարդագոյն կռնկենիի խկութիւնով (ըթըր եաղը) խառնելին, որ վարդի խկութեան հոտին չափ մօտենայուն, գրեթէ յայտնի չըլլար միայն հոտատելով: Այս խարդախութիւնը երևան հանելու համար սրտչեալ չափով մը կասկածելի վարդի խկութեան կ'առնեն, և նոյն չափով ծծմբական թթւութեամբ (գաճ եաղը—ասիո սիւլֆուրիք) հեալ կը խառնեն: Եթէ գոյնը և հոտը ու է փոփոխութիւն չի կրէ, ըսել է՝ վարդի խկութիւնը անարատ է. հակառակ պարագային, այսինքն՝ երբ կռնկենիի խկութիւն կը սխալունակէ իր մէջ, այն ատեն գոյնը կը սևնայ իսկոյն, և անհաճոյ հոտ մը կ'ստանայ:

Նաեւ տեսակ մը պատատուկ (պօրու չիլէյի կամ գուլի սապահ) կայ, որուն խկութիւնը կը մօտենայ վարդի խկութեան, որով և կը խարդախուեն այս վերջինը: Միեւնոյն եղանակով երևան կը հանուի նաեւ այս խարդախութիւնն ալ:

Վարդի խկութիւնը կը խարդախեն նաեւ երբեմն շուշմայի (սուսամ եաղը) և նուշի (սլաւոնէմ եաղը) իւղերով:

Ղ. ԲՈՂԱՏ

ՇԵՐԱՄԱՐՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԴԵՐՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

Մակարուծային

փոխանցիկ հիւանդութիւններ

ՓՏԱՒՏ (Flacherie, Պոլլըն կամ Սիւմիկ հասթալը)

(Հարանուր. ԳԻՍ ԲԻ—44)

Մեր Թուրքիացի շերամաբուծները լաւ գրութիւն մը ունին շերամները կերակրելու մասին. այսինքն՝ տերեւները փոխանակ ճիւղերէն փրցնելով տալու, ճիւղերը այնպէս անկողիններուն վրայ կը դնեն, որոց վրայ թրթուրները ելլելով կը ճարակին: Այս կերպով օդը ազատ շրջան կ'ընէ ճիւղերուն մէջ մնացած պարտալ միջոցէն, թրթուրները ազատ կը սողոտին, և չեն ոտկուելու շարունակ անկողնոյ աղտոտութեանց մէջ մնալու: Այս գրութիւնը կը գործադրուի նաեւ Իսթանբուլի մէջ, բայց Յրդ և Էրդ խորխայուններու ժամանակ միայն:

ՅԵՂԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹ

ԿԱՍ

ԲԱՐԻՈՔՈՒԹ՝ ԲՃԻՃՆԵՐՈՒ ՄԷՋ ՄԵԾԱԲԱՆԱԿ

ԲՈՒԾՈՒՄՈՎ

Տուէք ինծի ու է անծանօթ հունտ մը, որ բուծուած ըլլայ ամենէն գէշ պայմաններու մէջ, ու ամենէն յոռի եղանակներով, և վարակուած փտախտի՝ մինչև իսկ պղպեղախտի մանրէներով, ես յառաջ բերեմ անոնցմէ՝ առողջ հունտեր. և այդ կերպով ահա՝ բարեօքեմ այդ շերամի ցեղը, վերադարձնելով իրեն՝ իր նախնեաց առողջութիւնը և գերընտիր յատկութիւնները:

Այս գրութիւնը հիմնուած է, ինչպէս տեսանք բճիճներու մէջ կատարուած հետաբուծութեան եղանակի բացատրութիւնով, իւրաքանչիւր անհատ՝ առանձին տառելով, գէշերը ոչնչացնել՝ և աղէկները միայն առնելուն վրայ: Այսպէս ահա՝ երբ կ'ուզէք ձեր բուծումները վստահօրէն կատարել, և ապա-

հով ըլլալ թէ՛ անոնք հետզհետէ բարեօքելով, այլեւս այդ վտանգաւոր և փճացուցիչ արտերէն ողատ պիտի մնան, պէտք է դուրս դնել ընդարձակ տարածութեան վրայ, որպէս զի արտաքին կամ պատահական ազդեցութիւններէ զերծ մնալով մի միայն ժառանգական վարակութիւն առաջը առնելու զբաղիք, ինչպէս կ'ըսէ այս առթիւ Մ. Բասթէօն. «Ժառանգականութեան պատճառներուն վրայ մի՛ աւելցնէք ուղղակի փոխանցման՝ այսինքն՝ արտաքին կամ պատահական պատճառներ ևս, եթէ կ'ուզէք ձեր շերամի ակտաւարակ ցեղը պաքինել, ևլն.» :

Մ. Բասթէօն իր այս տեսութեան ճշմարտութիւնը հաստատելու համար, հետեւեալ կերպով փորձեր կատարած է :

Իրարմէ անշատ և հեռի, երկու բուծարաններու վրայ առանձին տաճումներ կատարած է երկու տեսակ հոնտերով, որոց մին արտադրուած էր պղպեղախտի մարմնիկներով վարակուած, իսկ միւսը՝ համրիչաշար խմորիտներ պարունակող թիթեռնիկներէ : Այդ միւսնայն հոնտերէն, իբր փորձառական նմոյշ, մէկ քանի տարբեր և հեռաւոր շերամաբոյժներու տալով, ամէնքն ու, ըստ կարելոյն՝ մեծ թէ փոքր քանակութեան վրայ խնամատ տաճումներ կատարեցին, թէ և սովորական դրութեանց հետեւելով, բայց և ոչ մէկին բուծումը յաջողութեամբ չի պատկուեցաւ, երբ ասդին Մ. Բասթէօն այդ առաջին փորձին մէջ խիստ գոհացուցիչ յաջողութիւն մը կը գտնայ, և կ'ստանայ՝

Ա. Բուծասեղանէն (պղպեղախտէ վարակուած) հարիւրին 28 խողակ, և հարիւրին 16 առողջ և ակտաւաբեր թիթեռնիկներ, և՛

Բ. Բուծասեղանէն (փտախտէ վարակուած) հարիւրին 32 խողակ, և հարիւրին 32 ալ առողջ և ակտաւաբեր թիթեռնիկներ :

Այս դրութիւնը կը կատարուի հետեւեալ կերպով : Հոնտերը բացուած օրէն իսկ, իւրաքանչիւր թրթուր առանձին տաճին առնելով, իրարմէ անջատ և օգտաւուն խորշիկներու մէջ բուծել, ուր բոլորովին զերծ կը մնան մէկզմէկու շփուելէ, ինչպէս կը կատարուի զատ զատ քսակներու մէջ հոնտ հասցնելու դրութիւնը, որու ընդարձակ եւ մեծաքանակ բուծումը կրնանք նկատել ա-

տիկա : Հարկ չկայ աւելցնել թէ, անշուշտ ամէն կարելի խնամք պահալու չէ՝ նախապէս շերամատուը հակոտնեխելու մասին :

Հոնտերը բացուելէ առաջ, պէտք է տարածել սովորականէն շատ ընդարձակ տեղի մը վրայ. այնպէս որ՝ զգալի կերպով իրարմէ հեռի գտնուին, և աջալուրջ հսկողութեան տակ առնելով, հաւկիթները բացուելուն պէս՝ առանց մէկզմէկու դաժ ըլլալու, խիստ վերջնէ մէկիկ մէկիկ, խիստ փոքրիկ ունեկի (ժամագործներու դործածած և չիթի կոչուած գործիքով) մը ծայրով տերեւներու մանր կտորներու վրայ առնելով, և անմիջապէս առաջուց պատրաստուած խորշիկներու մէջ զետեղել :

Այս խորշիկները կը պատրաստեն շատեր այլեւայլ եղանակներով. ոմանք բուծասեղանին վրայ միակտուր խաւաքարտէ (մուգուվա) խորշիկներ կը շինեն սապէս. նախ՝ չորջուպատի եզերքները 6 կամ 7 հարմիթր (սանթիմէթր) բարձրութիւնով մեծ կակ տուփեր կը պատրաստեն, որոց երկայնութիւնը և լայնքը խաւաքարտին մեծութենէն կախում կ'ունենայ. յետոյ այդ տուփերը աչքերու կը բաժնեն, եզերքներու լայնութեան և երկայնութեան հաւասար խաւաքարտեր կտրելով. զորս իրարու վրայ խաչաձև կը զետեղեն, այնպէս որ՝ իւրաքանչիւր աչքի կամ որ նոյնն է՝ խորշիկի կողմերը 8 կամ 10 հարմիթր երկայնութիւն ունենան : Տուփերուն յատակը կազմող խաւաքարտը նախապէս խիստ փոքր դուրով (զըմպա) մը կը ծակծլկեն, և որպէս զի օդը ազատ շրջան ընէ, տուփերուն տակը 1—2 հարմիթր բարձրութեամբ, և մէկ քանի տեղերէն ոտքեր կը հաստատեն՝ փայտով կամ խաւաքարտով շինուած. իւրաքանչիւր խորշիկի յատակը առաջուց կը զետեղեն իր չափով «քանէվա» լի քաւակուտի կտոր մը, և կամ աւելի աղէկը՝ ծակտուկէն հաստ թուղթ մը, և թրթուրները անոնց մէջ դրուելէն վերջը՝ աչքերուն վրայ կը ծածկեն նոյնպէս քանէվայով կամ ծակտուկէն թղթով, որպէս զի թրթուրները մէջէն դուրս ելլելով միւս աչքերուն մէջ չերթան :

Այս կերպով պատրաստուած բժիճները աղէկ չեն, տաճման մասին միշտ զգուշացուած թիւններ տեղի կ'ունենան. ուստի՝ աւելի ա-

դէկ կ'ըլլայ, փոխանակ իրարու միացած այսպէս խորշիկներ շինելու, միեւնոյն չափերով, քառակուսի կամ կլոր տուփեր շինել իրարմէ անջատ, ճիշտ հունտերը մէջը պահուած խաւարատէ տուփերու պէս, բայց անոնցմէ մեծկակ: Հարկ չի կայ ըսել թէ՛ այս տուփերուն յատուկն ալ ծակառակն ըլլալու է, և մէջը նստապէս դնելու է ծակառակէն թուղթ մը կամ քանափայի կտոր մը, որ անկողինը մաքրելու ժամանակ կը վերցնեն՝ անոր տեղ նոր մը դնելով:

Այս դրութիւնով, թրթուրները միշտ կրնան արգելադատէ կամ փախտէ վարակուած ըլլալ, եթէ հունտերը իրենց մէջ կը պարունակեն առաջուց՝ անոնց մանրէսերմերը, բայց ուղղակի փոխանցումէ բոլորովին զերծ կը մնան. որով՝ եթէ գտնուին թրթուրներու մէջ մէկ քանիներ, սրտնք այդ մանրէսերմերէն բարեբախտապէս ազատ մընայած են, առանց վարակուելու վախ ունենալու, իրենց շրջանը կ'աւարտեն ամենայն յաջողութեամբ:

Արդէն՝ բուծման ժամանակ մեծ հսկողութիւն կատարելու է. և երբ տկար կամ հիւանդոտ թրթուրներ նշմարուին, խիոյն իրենց տուփերով մէկտեղ հեռացնելու է բուծարանէն, թրթուրը և իր անկողինը ամբողջովին ոչնչացնելու և տուփն ալ հակառակութեամբ կ'երեւին, և յաջողութեամբ իրենց ամէն շրջանները կ'աւարտեն, անոնց թրթուրներն ալ պէտք է մանրադիտակով դնել, և պղպեղախալ մարմնիկներ պարունակողներու հունտերը ոչնչացնել:

Ինչպէս կը տեսնուի, այս դրութիւնը գծուար և յոգնեցուցիչ աշխատութիւն մը կը պահանջէ թէև, բայց միւս կողմէն անհրաժեշտ պէտք մ'է՝ մանաւանդ ապառաջ հունտերով բոլորովին ախտազերծ սերունդ մը յառաջ բերելու պարագային մէջ. ինչպէս վերը բացատրուած Ը. Բաթէօսի փորձերէն բացորոշապէս կ'երևի, որ՝ բոլորովին գէշ պայմաններու մէջ բուծուած հունտերէն հարկւրին 16 և 32 առողջ արտադրողներ ձեռք բերուած են, և թէ իր շարունակութեան մէջ, մէկ քանի սերունդներէ յետոյ, անսխալապէս ամբողջովին բոլոր ժառանգական հիւանդութիւններէ զերծ անհատներ յառաջ

բերուելը, ամէն կատարածելի ենթադրութիւններէ հեռի կը մնայ. թէև՝ անկէ վերջը, ամէն կենդանի էակներու պէս, անոնք ալ պատահական կամ տիպաւային հիւանդութեանց կրնան ենթարկուիլ՝ երբ սովորական դրութիւնով բուծուին: Այս պարագային մէջ ալ աւելորդ չենք համարիր կրկնել թէ՛ բըճային բուծումի պէս եթէ լուրջ հսկողութիւն մը կատարուի, և այդ դրութեան պայժմաններուն պահանջմանց համաձայն շարժուի ըստ կարելոյն, կրկին յաջողութիւնը տալու հով կ'ըլլայ. այսինքն՝ հունտերը բանալ ընդարձակ տեղի մը վրայ. և երբ նորածին թրթուրները բուծասեղաններուն վրայ առնուին, ընդարձակ տեղ տրուի իրենց, այդ օրէն խի սկսելով. և որչափ մեծնան, այնչափ իրենց տեղը ընդարձակել, և այս՝ ամէն օր շարունակ, եթէ կարելի ըլլայ. բուծարանին օդը միշտ առատ, մաքուր, չոր և շարունակ նորոգութեան մէջ պահել. վերջապէս՝ եթէ տկար, հիւանդոտ կամ մեռած թրթուրներ տեսնուին, խիոյն վերցնել և ոչնչացնել, իրենց տեղը գտնուած անկողիններով մէկտեղ:

(Շար.)

Ղ. ԲՈԼՍ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ

ԲՈՅՍԵՐՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒՄ

Բուսական կեանքի խորին ուսումնասիրութիւնն ու մանրադիտական հետազոտութիւնները, ուշիմ բուսաբաններու ու քաջազարթ մասնագէտներու թողլով, մենք քննենք անոնց բնական կազմութիւնն ու վերարտադրիչ (սերնդաւորող) յօրինումները և անոնց պաշտօնը:

Բոյսերն ալ կենդանի արարածներու նման մասնաւոր յօրինումներու միջոցաւ կ'արդիւնաւորուին: Առանց անոնց՝ բուսական կեանքը չի կրնար գոյութիւն ունենալ աշխարհի վրայ: Գալիֆոռնիոյ ամենահսկայ ծառերէն մինչև յետին մամուռին վրայ այդ հրաշալի յօրինումները կը տեսնուին:

Գիտունք, բնապատումը ու բուսաբանութեան քաջազարթ մասնագէտք, բոյսերը ի-

րենց յօրինումներու տեսակետով երկու մեծ դասակարգի կը բաժնեն: Առաջին՝ անոնք որ իրենց յօրինումները ծաղիկներով կը ներկայացնեն, կը կոչեն «յայտասեր» (phanerogameae). երկրորդ՝ անոնք որ առանց ծաղիկ են՝ «գաղտասեր» (cryptogamae) (*). Առաջինները ծաղկաւոր են, իսկ երկրորդները անծաղիկ:

Մեր ամէն օր տեսած ու չորջերմիս գանուած բոյսերուն մեծ մասը առաջին գասակարգին կը պատկանին. ուստի երկրորդը զանցառելով, քննենք առաջին կարգի վերարտադրիչ յօրինումները:

Այս կարգին լաւ օրինակ մը կրնայ ըլլալ մեր հասարակ «ծիրանին», որուն վերարտադրիչ գործարանը իր ծաղիկն է, որ չորս կարեւոր մասերէ կը բաղկանայ, «բաժակ» (calix), «պսակ» (corolla), «առէչ» (stamen) և «սերմանօթ» (pistil):

Առաջին երկուքը պտուղը պահպանելու կը ծառայեն, իսկ վերջինները սերմագործելու պաշտօնը կը կատարեն:

Առէչը երկուքի կը բաժնուի, կոթուն և գագաթի դեղին փոշին. իսկ սերմանօթը երեք մաս ունի Ձուարան (ovary), Միլ (styl), և Գագաթ (stigma):

Սերմանօթը կ'արդիւնաւորուի Առէչի դեղին փոշին իր գագաթին վրայ խնալովը, ուր կը գտնուի նախապատրաստ կաշուն հեղանուտ մը, որ՝ եթէ կերպով մը փոշին հատիկներէն մին կամ աւելին խնայ, ամենա-սաստիկ ցնցումն անգամ զայն այդ որոգայթէն ազատելու անկարող կ'ընէ: Այդ փոշին ժամանակ մը հոն մնալէ վերջ՝ ուրիշ խողովակ մը կ'սկսի երկարաձգիլ դէպի Ձուարանը, անոր մէջի հեղուկը Առէչի փոշին հետ յարաբերութեան կը մտնէ. այս միջոցին

Ձուարանը կ'սկսի ուռիլ և տակաւ առ տակաւ սերմանօթն ևս ուռելով մեր ծիրանը յառաջ կը բերէ:

Այժմ մեր ուշադրութիւնը քիչ մ'ալ ծիրանի վրայ դարձնենք. անիկա՝ երեք մասեր ունի, մեր կերած փափուկ ու հիւթեղ մասը, կարծր կեղևը և սերմը: Հիւթեղ մասը և կեղևը նորարարող բոյսի առաջին սնունդներն են: Սերմն ալ երեք մասէ կը բաղկանայ թաղանթեայ տոպրակ, սնուցիչ բնասպիտ և սալմ: Սալմը իրիւս փոքրիկ ծառ միտած կը կենայ բնասպիտի մէջ:

Պտուղը երբ յարմար տեղ մը խնայ, հիւթեղ մասը ու կեղևը կ'սկսի փտուիլ, յետոյ սերմի տոպրակը պայթելով նորահաս պտուղ մը սնուցանելու պատրաստ վիճակի մը մէջ կը գտնուի:

Այս գործողութիւններու միջոցին, սաղմն ալ «բնասպիտ»ը ուտելով կը մեծցնէ բոյսին նախ արմատը յետոյ գոյգ մը տերեւներ կ'արձակէ ու փոքր առ փոքր կը մեծցնէ բունը: Եւ երբ բնասպիտը հատնի, սաղմն ալ կ'սկսի իր սնունդը հողէն առնել. այս պարագային մէջ է որ տակաւ առ տակաւ չորնալով իրիւս նորահաս բոյս մը հողէն դուրս կ'արձակէ երկու տերեւները. վերջապէս ժամանակի բերմամբ կը զարգանայ, ինքն ևս ծաղիկներ ու սերմեր կ'արտադրէ:

Միտանի ծաղիկը բոյսերու շարքին մէջ նշանաւոր տեղ մը կը դրաւէ իր ամենակատարեալ վերարտադրիչ գործարաններու մասին: Կան բոյսեր որ ոչ բաժակ և ոչ ալ սերմակ կ'ունենան, սակայն ասոնցմէ միոյն բացակայութիւնը իր արգասաբերման արգելք մը չի կրնար ըլլալ: Յիշուի չառ բոյսեր թերի գործարաններ ունին. այսու ամենայնիւ այնպէս կարգադրուած կ'ըլլան որ միևնոյն բոյսին վրայ Առէչը ու Սերմանօթը զատ զատ ծաղիկներով կը ներկայանան, ինչպէս ընկուզենին որուն առէչը կանաչադոյն երկայն ծաղիկ մ'է. իսկ սերմանօթը փոքր սպիտակ ծաղիկ մը, բնականաբար պտուղն ալ սերմանօթին վրայ կը ներկայանայ:

Կան բոյսեր ալ որոնց առէչը և սերմանօթը թէև զատ զատ ծաղիկներ են, բայց փոխանակ ընկուզենիի ծաղիկներուն պէս միևնոյն տունիկին վրայ ըլլալու, առէչը մէկ տուն-

(*) Corolle բառին իբր հայերէն համարիչ աւելի յարմար կը գտանք «Սաղարկ» բառը

Etamine Երգկատու կամ ծաղկորձ:

Pistil Երգկէզ:

Ուստի՝ ծաղկատուն որ ընդ հանրապէս գնդառեղ պէս կոթ մը և գլուխ մը ունի, առաջինը կը կոչենք «Կոթուն» կամ «առէչ»՝ իսկ երկրորդը որ առէչին գագաթը կը կազմէ, բեղմանօթ (anthere)՝ բեղմինը (pollen) պարունակելուն համար, բեղմին կոչածնիս ներկայ Պ. Յօդուածագրի գեղին փոշի սնունդանոցն է, իսկ սերմանօթ (pistil) կոչածը՝ ծաղկէզ կոչել աւելի յարմար դատած ենք:

Խ. ԽԻՐ.

կին վրայ, իսկ սերմանօթը ուրիշ տունիկի մը վրայ կը գտնուի: Ահա այս տեսակ տունիկերը փոշին քանի մը կերպերով կ'ընդունին կամ քամիի միջոցաւ, կամ իրենց զգայուն առէջներուն՝ հրբեմն ալ առէջին առաձգական ըլլալով՝ կը ծռին և պսակին դաշեղով, ուղղակի սերմանօթի գագաթը կը նետուին ու կը թօթուեն փոշին:

Երբ միւսնայն տունիկին վրայ Առէջը դատու Սերմանօթը գատ ծաղիկներով ներկայանայ, իրենք բոյսին տերեւներու լացուելէն առաջ կը հասունանան ու կ'սկսին տարափի պէս փոշիներ տեղացնել որպէս զի սերմանօթը զուրկ չմնայ: Ահա այս պատճառաւ բնութիւնն ալ շատ նպաստած է՝ իրենց որով տերեւին ճուաճեւ ըլլալով Սերմանօթը միշտ բաց ու պարտաւոր կը կենայ դիւրութեամբ փոշին ընդունելու:

Բոյսերու էգ և արու տեսակները փոշին կ'ստանան քամիի և միջատներու միջոցաւ, բնականէն պսակները խողովակաձեւ են, որ անոնց մէջ վերին կողմը 4—5 բարակ թելեր վերէն վար կը տարածեն: Երբ միջատները խողովակին մէջ կը մտնեն հոն գտնուած հըրապուրիչ հիւթը ծծելու համար, թելերու միջոցաւ կ'արգիլուին ու կը բանտարկուին մինչև որ Առէջները հասունանան: Ահա անոնց հասունանալէն վերջ՝ պսակները կը չորնան ու իրենք զեղին փոշիներով պատած կը թռչտին՝ ուրիշ խողովակներու մէջ կը մտնեն որոնք Սերմանօթներու պսակներ են:

Հոն ևս կը բանտարկուին և կ'սպաննեն մինչև Սերմանօթներու հասունանալը. վերջապէս հոն իրենց բերած փոշին ձգելէն վերջ՝ պսակներուն չորնալովը կ'ազատուին, և ահա այս միջոցաւ պատճառ կը լինին անոնց արդիւնաւորման:

Եւրոպայի հարաւային ճահիճներուն մէջ կան տեսակ մը բոյսեր, որոնց արունքը իրենց արմատները տիղմի մէջէն կը հանեն ճահիճներու մակերեսին վրայ և արեւու ճառագայթներուն տակ կը հասունցնեն իրենց փոշիները. քիչ վերջ էգ բոյսերն ևս ջրայ մակերեսը կ'եղեն և կը հասունցնեն իրենց սերմանօթները. այս գործողութիւնները կատարուելէն վերջ փոշիները քամիի միջոցաւ կը փոխադրուին միւսին. այս կերպով էգ բոյսերու սերմանօթները բեղմնաւոր-

րելն ետքը անմիջապէս ջրին յատակը կ'իջնեն:

Այժմ այս գործողութեան յենքով, ծաղիկներէ և բոյսերէ ընտրեւագոյն ցեղեր և ստորացեղեր կ'արտադրեն. օրինակ՝ կարմիր մեխակ: Առէջի փոշին առնելով սպիտակ մեխակ Սերմանօթին վրայ կը դնեն, քանի որ այդ երկու մեխակները միւսնայն սեռէ են. ահա հոն տալմնաւոր սերմ յառաջ կուգայ. և այս նոր տեսակ սերմը ցանելով յաջորդ տարին բոլորովին տարբեր գոյնով, սպիտակի և կարմիրի խառնուրդէ բաղկացեալ մեխակ կ'ստանան, այսպէս գործողութիւնը տակաւ առ տակաւ շարունակելով, տարուէ տարի տարբեր գոյններով ծաղիկներ կ'ստանան:

Անթապ

ՆԵՐ. Գ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒՄՆԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ

Ծծմբային թթւութեամբ (սոսիս սիւլֆուրէօ) բուրդին բնական զեղնութիւնը կը գունաթափէ, և այս պատճառաւ, բրդեղէնները ճերմկցնելու համար ամենէն աւելի այս թթւութեամբ կը գործածեն, ինչպէս պիտի տեսնենք ճերմկցնելու գործողութիւնը բացատրած տեսնելիս:

Բուրդը՝ ծծմբային կալը (կալ սիւլֆուրէօ) հաստատութեամբ կը բռնէ իր ծակափիկներուն մէջ, ինչ որ պէտք է խնամով անհետացնել, ճերմկցած բուրդի մէջէն ներկելու գործողութեանէն առաջ: Այս գործողութեան համար բուրդը կ'ընկզմեն բնածխական նատրոնի (սոսա) խիստ թեթեւ լուծուածքի մէջ, կամ եղմաքլորական կիլի (քլորէճ գայմալի) և կամ թթւածնական ջուրի մէջ, ուրիշ հանելով՝ կը լուան խնամով. թէ բնածխական նատրոնի լուծուածքը գործածէք, ծծմբային թթւութեամբ պարզապէս կը չեղքանայ, բայց միշտ բուրդին մէջ կը մնայ:

մինչդեռ վերջի երկու միջոցներով, ծծմբական թթւութի (զաճեաղի) կը փոխուի, եւ ջուրին մէջ կը տարածուի: Եթէ այս նախազգուշական միջոցները ձեռք չառնուին, այն ատեն բուրդը աղէկ չի ներկուիր, և ներկուելէն վերջն ալ, եթէ ոչ անմիջապէս, գէթ ժամանակ մը վերջն (իր մէջ պարունակած ծծմբային թթւութի քանակութեան համոճայն) կը գունաթափի ծծմբային թթւութի գունաթափիչ ազդեցութեան տակ:

ԱԼՔԱԼԻՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ. — Ալքալիններով պատրաստուած լուծաջուրերը մեծ ազդեցութիւն ունին բուրդին վրայ. բայց ալքալի տեսակին, լուծաջուրի խտութեան աստիճանին, և ասոր թարեխառնութեան և բուրդի հետ ունեցած հաղորդակցութեան տեսութեան համեմատ, արդիւնքը ամբողջովին կրնայ տարբերիլ, ինչպէս պիտի տեսնենք ի ստորեւ:

ԿԻԶՈՂԱԿԱՆ ԱԼՔԱԼԻՆԵՐԸ. — Ինչպէս գիտենք, այս կարգին կը վերաբերին կիզողական կալին և նատրոն(*), որոնք՝ ամէն պարագայի մէջ բուրդը կը խաթարեն իրենց կիզողական բնաւորութեան հետեանքով, և այս պատճառաւ երբեք ներքի չէ գանոնք կիրարկել բուրդը իւղատելու գործողութեանց մէջ:

Երբ կիզողական ալքալիններով պատրաստուած լուծաջուրի մը մէջ բուրդը ընկղմելով տաքցնենք, որչափ ալ անգոր ըլլայ լուծաջուրը, այսինքն՝ որչափ ալ քիչ ալքալի դրուած ըլլայ ջուրին մէջ, իր սաստկութեան աստիճանին համեմատ, աստիճանաբար բուրդը կը հալեցնէ. ուրիշ յառաջ կուգայ ջրածնի ծծմբուկ (սիւլֆիւռ տիտոսփէն) կոչուած կազը, որ կը ցնդի օդին մէջ, և լուծաջուրն ալ իր մասին կը պարունակէ յօրինուածական թթւութի օղայակերպեր, և ծծումբ նարունակող ուրիշ նիւթ մը, որ կը կոչուի ըրդամանական թթւութի (acide lanuginique):

(*) Բոթաւ եւ սուտ գօթիք (եազըճը բօթաւ և սօտա): Ասոնց պատրաստութեան վրայ պիտի գրենք մօտաւորապէս, և մասնաւորաբար մեր գաւառացի ներկարարներու համար, որպէս զի՝ ի պահանջել հարկին, իրենք իսկ կարողանան զիւրութեամբ և ածանոթեամբ պատրաստել:

Այս նիւթը երբ ջուրի մէջ լուծուած ըլլայ, բոլոր գունատու նիւթերը՝ որոնք ուղղակի կերպով ներկելու յատկութիւն ունին, ինչպէս և տոպարական թթւութիւն (acide tanique) որ կը գտնուի գիտորի՝ մազը՝ կալնիի կեղևի կընի մէջ, քոռական թթւութիւն և բազմաթիւ մետաղական քացախատները (երկաթի, կապարի, բնալեղի ևլն.) ներկելի մարմիններու վրայ մակայարելու յատկութիւն ունի. այսինքն՝ ներկերը զիւրութեամբ այդ մարմիններուն կը միանան:

Օճաւի և բնածխական ալքալիններու (պարզ բօթաւ և սօտա) լուծաջուրերը եթէ խտացեալ չըլլան՝ այսինքն՝ եթէ ջուրին մէջ մեծ քանակութիւնով չի գտնուին, և եթէ լուծաջուրին տաքութիւնը 50 հարիւրադի աստիճանը չանցնի, բուրդը չեն խաթարեր, և կամ շատ քիչ կը վնասեն զայն: Օճաւի և անուշաւորական բնածխաւի (քաւպօնաթ տիտոսիաք՝ նշատըր թուղիի նմանող տեսակ մը ալ) խաթարիչ ազդեցութիւնը շատ տկար է բուրդին վրայ, մինչդեռ բնածխական կալին և նատրոնը գեղին գոյն մը կուտան բուրդին, կը կարծրացնեն զայն, և իր առաձգականութիւնն ալ կը նուազեցնեն:

Կիզողական ալքալիններու և բնածխական ալքալիններու ազդեցութեան մէջ եղած վերոյիշեալ տարբերութենէն կը հասկցուի որ, բուրդը իւղատելու (աղտերը մաքրել) գործողութեանց մէջ նկատողութեան առնելու է որ, գործածուած օճաւին մէջ չափազանց ալքալի չի գտնուի, ինչպէս և բնածխական նատրոնը (սօտա) իր բաղադրութեան մէջ կիզողական նատրոն չի պարունակէ:

Կիրն ալ (քիրէճ) իր մասին՝ բուրդը կը խաթարէ, բայց ոչ ալքալիններու չափ:

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՔԼՈՐԻ ԵՒ ԻՐ ԱՇՄԱՆՑՈՒՄՆԵՐՈՒՆ. — Բլրը և ենթաքլորակները առանց քացառութեան բուրդը կը խաթարեն հետեալաբար և ճերմկեցնելու գործողութեանց մէջ կարելի չէ կիրարկել: Կիրի քլորուկի (քլուրու տը շօ՝ քիրէճ գայմաղի) տաք կամ եռացող լուծաջուրը՝ ամբողջովին բուրդի ներարդները (թելերը) կ'խաթարէ, և այդ միջոցին ալ լուծաջուրին մէջն անկենդան (ազօղ) կ'արտացնել: Սակայն՝ եթէ բուրդը քլորի կամ ենթաքլորուկի թթւութի (ասիտ իրօքթօթօ) խիստ թեթեւ ազդեցութեան են-

թարկուի, դեղնագոյն երանգ մը կ'ստանայ, և այն ատեն ալ մէկ քանի գունատու նիւթերու հետ յարակցելու յատկութիւնը կ'աւելնայ: Ասիկա նեարդի օքսիտացումի մէկ հետեանքը կրնայ նկատուիլ, քանի որ թըթուածնացեալ ջուրով (օ օքսիժինէ) կամ կալի վերամանկանաւով (բէւմանկանաւթ տը բօթաթ) ուժգնօրէն ճերմկցած բուրդը միևնոյն յատկութիւնները կ'ստանայ:

Բրդեայ և կիսաբրդեայ (բամպակախառն բուրդ) մարմաշները (թիւլպէնտ) ներկատուելու (պատմա պոյա) համար քլորը և իր բաղադրութիւնները օգտակարապէս կրնան կիրառուիլ իրենց այս յատկութեան համար: Բրդեղէնի ներկարարներն ալ երբեմն կրնան գտնուիլ կիրառելի, երբ գաղջ կամ պազ բարեխառնութեան մը մէջ գործելու պարտաւոր ըլլայ, ինչպէս պիտի տեսնէք վերջերը:

ՄԵՏԱՂԱՅԱՆ ԱՂԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.
—Բուրդը՝ լոյսը ուրիշ կենդանի նեարդներու պէս, կարգ մը մետաղական աղերու լուծաջուրերը բաղադրուածելու յատկութիւնն ունի: Երբ՝ զոր օրինակ՝ ծծմբաթի, քլորակի, անիլինդանտի՝ բնաղիւզով, անագով, պղինձով, երկաթով, քրոմով ևլն. պատրաստուած եռացող լուծաջուրերէն մէկուն մէջ գնենք բուրդը, այդ մետաղներէն բաղադրութեան մէջ գոյացած անլուծելի և հիմնադաշիք (basseigne) պզտիկ մաս մը նեարդին վրայ կը մըթերի կամ կը հատտատուի, և ուրիշ թթուատային աղ մ'ալ հեղուկին մէջ լուծուած կը մնայ: Բուրդը ներկամածելու (mordance)(*) դրութիւնը հիմնուած է մետաղական աղերու վերոյիշեալ յատկութեան վրայ:

Նաորանի ծծմբաթի (սիւլֆատ աը սուր = ինկիլիզ թուղի) և նաորանի քլորակի (քլորաթ աը սուլֆատ = խոհանոցի աղ) չեզոք աղերը գրեթէ նշանակելի ազդեցութիւն մը չունին բուրդին վրայ:

ՆԵՐԿԱՏՈՒ ՆԻԻԹԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.
—Կարգ մը գոյացական ներկատու նիւթերու մասին՝ ինչպէս ֆուքսին (անէլինի մէկ տես-

նակը) ևլն. նշանակութեան արժանի խնամութիւն մ'ունի բուրդը, որոյ մէջ ուղղակի կերպով կը ներկուի, եթէ լուծաջուրերը յարմարագոյն չեզոքութիւն մը կամ թթուութիւն մ'ունենան:

Բայց երբ կիրարկուած ներկատու նիւթերը բուրդին վրայ հաստատուելու համար անպատճառ մետաղական օքսիտի մը միջնորդութեան պէտք ունենան, այն ատեն պէտք է նախապէս բուրդը ներկամածել:

ԽԱԿ ԲՈՒՐԴԻ ՄԷՋ ՓՏՆՈՒԱԾ ՕՏԱՐ ՆԻԻԹԵՐԸ.—ԲԻՐՏ.—Բուն իսկ բուրդի նեարդը չլծապատող օտար նիւթերը՝ մասնաւոր կարեւորութիւն մ'ունին ներկարարներու համար. որովհետեւ՝ այդ նիւթերը ամբողջովին և կատարելապէս ջնջելէն կախում ունի՝ հատտատուելու, անայլապէս, մաքուր և միակերպ գոյներու յաջողութիւնը: Միևնոյն նկատառութեամբ, բուրդի վաճառականներու եռօրայնանիւններու համար ալ մեծ կարեւորութիւն ունին բուրդին վրայ գտնուած օտար նիւթերը, պովհետեւ անոնց քանակութիւնը բուրդին տեսակին և մշակութեանց դրութիւններուն հետ կը տարբերի, հետեւաբար և անոր վաճառականական արժէքին վրայ մեծ ազդեցութիւն կ'ունենան:

Սովորաբար՝ վաճառականական խնամով, բուրդի նեարդին վրայ լիակամ բոլոր աղանդութիւնները «քերտ» կը կոչուի:

ԱՂՏՈՏ ԵՒ ԱՆԼՈՒԱԾ ԲՈՒՐԴԻ ԿԱԶՄՈՂ ՄԱՍՆԵՐՈՒ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.—Ոչխարներու կենսակէն բուրդը խուլուելէն վերջը շատ մը փորձեր կատարած են, և գտած են հետեւեալ քանակութիւնները,

Խոնաւութիւն	100ին	4էն մինչև	24
Քիրտ	»	12էն	» 47
Բուրդի նեարդ	»	15էն	» 72
Հողային նիւթեր	»	5էն	» 24

Ամենէն ազնիւ բուրդերը՝ ինչպէս մերինոսը, ընդհանրապէս, կոշտ բուրդերէն աւելի քերտ կը պարունակեն, իրենց կազմութեան հետեւանքով, որու մասին արդէն խօսած եւք:

Երբ բուրդը ջրով լուացուի, զգաւի նման կարգ մը նիւթեր կը գտնուին իրմէ, ինչպէս կալի իւղիտատ (օլէաթ տը բօթաթ) կոչուած նիւթը, և ուրիշ կարգ մ'ալ տհալ պարարտային նիւթեր:

(Շար.)

Ղ. ԲՈՒՍ

(*) Գունատու նիւթերը՝ ներկելի մարմիններու վրայ հաստատուելու համար, ներկելէ առաջ տրուած մասնաւոր պատրաստութիւններ, ինչպէս՝ շաղկամաք ևլն. որոյ վրայ ընդարձակօրէն պիտի գրենք իրենց կարգին:

ԽՈՇԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ՀԱՒԿԻԹԻ ԽՃՈՂԱԿ (ՏՕԼՄԱ)

Առէք 10—12 հաւկիթ. լաւ մը խաշեցէք, կեղեւեցէք, մէջտեղերէն (երկայնութեանը) կիսեցէք, գեղինները հանեցէք, և խառնեցէք սոյգ գեղինները՝ 3 հոմ հաւկիթի գեղիններուն հետ։ Քանի մը հաա անձրուկ (անշուաղ), մէկ քանի հաա դալար սոխ, 1—2 պատրինջի (մէլիսէ) տերև, քիչ մը հացի փօր և պղպեղ, ջարդեցէք և իրար խառնեցէք, սանդի մը մէջ ծածեցէք և վերը յեշուած ամուր խաշած հաւկիթի ճերմակներուն մէջ լեցուցէք. մէկը միւսին վրայ ծածկեցէք և մետաղեայ ամանի մը մէջ հաւկիթները մի առ մի շարեցէք։ Առէք հիմա քիչ մը կարագ կամ գ.մակի իւղ, տապակի մը մէջ հալեցուցէք, երեոք փրփուրը առէք և հաւկիթներուն վրայ լեցուցէք, 20 վարկեանի չափ կամայ փուռի մէջ եփեցէք, և միենայն ամանով հրամցուցէք։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՁՈՒԱՊՈՒՐ (ՉԸԼՊԸՐ)

5—6 հաա սոխ բարակ բարակ մանրեցէք, կարագ կամ գ.մակի իւղի մէջ խորովեցէք առանց կարմրցնելու. դգալ մը ալիւր ցանեցէք. և քիչ մը կաթ կամ մի ջուր աւելցնելով՝ մաղմաղ կրակի վրայ եփեցէք, և փայտէ դգալով մը միշտ տրորեցէք որ սոխը խիւսի վերածուի, ու յետոյ ազպղպեղով համեմեցէք։

Առաջուց խաշեցէք 6—7 հաա հաւկիթ. կեղեւեցէք և կլոր կլոր կտրուեցէք (պէտք է կարծր խաշել հաւկիթները), լեցուցէք կլոր մետաղէ պնակի մը մէջ, կարգ մը հաւկիթ և կարգ մը սոխի խիւս. քիչ մը մաղմաղի վրայ դրէք. երբ խիստ չոր ըլլայ, այն ատեն քիչ մը կաթ կամ մի ջուր և քիչ մ'ալ

կարագ աւելցուցէք, ու միենայն ամանով սեղան դրէք։

ՈՒՌՈՒՑԻԿ ՀԱՒԿԻԹ

Տապակին մինչև կէսը պաղ ջուր, քիչ մը աղ և քիչ մ'ալ քաղախ։ Դրէք կրակին վրայ. երբ ջուրը եռայ, տապակը քաշեցէք մէկ կողմ, և մաղ մաղ կրակի վրայ դրէք, եռացումը չափաւորելու համար։ Պնակի մը մէջ 3—4 հաւկիթ կտարեցէք և կամացուկ մը եռացեալ ջուրին մէջ սահեցուցէք, երբ կը տեսնէք որ եփած են, ծակոտկեն շերտերով մը մի առ մի առէք և գաղջ ջրով լի սանի մը մէջ կամաց մը դրէք, և շարունակեցէք այսպէս որքան որ պէտք ունիք։

Տապակի մը մէջ դրէք 40 տրամ կարագ. կամ լաւ պատրաստուած դ.մակ եղ, և մէկ դգալ ալիւր, և մաղմաղի վրայ դնելով՝ աղէկ մը յարեցէք, մէկիկ մէկիկ խառնեցէք 4 հաւկիթի գեղնուց, աղ և պղպեղ, պտղունց մը մշկընկալ, և լեմոնի մը ջուրը, աւելցուցէք նաև դաւաթ մը ջուր ու շարունակ խառնեցէք. երբ կը տեսնէք որ բաւական ինքղինքը ժողոված է՝ ետ առէք կրակէն, և քիչ մը ևս խառնեցէք։ Այս թացանը լեցուցէք պղտիկ սանի մը մէջ. և աւելի մեծ սանի մը մէջ քիչ մը ջուր լեցուցէք ու վերջիշեալ պղտիկ սանը մէջը դնելով մաղմաղ կրակի վրայ դրէք, որով կ'ունենաք կրկանթ (պէն-մառի) մը. և երբ գործածել ուզէք՝ աւելցուցէք վրան 40 տրամ կարագ։ Սեղան նստելէ 1—2 վայրկեան առաջ մաղմաղ կրակի վրայ դրէք մետաղեայ կլոր պնակ մը, և հաւկիթները ջրին մէջէն առնելով շարեցէք պրնակին մէջ, և այս թացանէն լեցուցէք վրան որչափ որ պէտք է, եւ տաք սաք հրամցուցէք։ Այս ուսուցիկ հաւկիթով կրնաք պատրաստել ոտորե գտնուած կերակուրները։

ԵՂԵՐԴ (ՀԻՆՏԻՊԱ)

Քանի մը տեսակ եղերգներ կան, սակայն կերակուրի համար միմիայն գան-

գրատերև եղերգը (բրվրուճըդ հինախ-
պա) կը գործածուի, որու միջուկը պէտք
է ճերմկցած ըլլայ:

Այս կերակուրը պատրաստելու հա-
մար պէտք է նախ՝ հետևեալ թացանը
պատրաստել: Դրէք տապակի մը մէջ 38
արամ կարագ կամ դմակ իւղ, երկու ա-
պուրի դգալ ալիւր, պտղունց մը մըշկ-
ընկոյղ. պէտք է հալեցնել այս ամէնը
կաթի մէջ, մազմալ կրակի վրայ դնե-
լով մինչև 15—20 վարկեան. եփելէն
վերջ, խիստ բարակ ջարդուած աղաւ-
դեղ աւելցուցէք վրան ու յետոյ կրկին
եփեցէք, մինչև որ քիչ մը թանձրանայ.
Ֆրանսացիք ասոր «Պէշամէլի թոցաթ»
կը զրուցեն:

Դանք հիմա եղերգի պատրաստու-
թեան: Ուղածնուդ չափ եղերգ առէք,
սակեցէք, լուացէք, կանանչ մասերը հա-
նեցէք: Զուրը եռացուցէք, մէջը պըտ-
ղունց մը աղ նետեցէք, և եղերգները
մէջը լեցունելով խաշեցէք. ապա թէ ոչ
եղերգները կը դեղնին. քամոցէ անցու-
ցէք և սանի մը մէջ դնելով աւելցուցէք
2—3 դգալ (որչափ որ պէտք է) պէշա-
մէլի թոցան ու քիչ մ'ալ կարագ, եւ
մազմալ կրակի վրայ 4—5 վարկեան
խորովեցէք, յետոյ ափսէի մը մէջ լե-
ցնելով, ուռուցիկ հաւկիթները վրան
չարեցէք ու իր թացանն ալ վրան աւել-
ցնելով տաք տաք հրամցուցէք:

ԾՄԵԼ (ՄՊԱՆՆԱԽ)

Ծմելը սակեցէք, կտրտեցէք, պաղ
ջուրի մէջ աղէկ մը լուացէք ու քամոցէ
անցուցէք: Զուրը եռացուցէք ու պըտ-
ղունց մը աղ նետելով ծմելները մէջը
նետեցէք, և երբ կը ածանցէ որ ծմելի
տերեւը ձեր երկու մատներուն մէջ կը
ճմլուի՝ այն ատեն վար առէք ու քամո-
ցէ անցուցէք և անմիջապէս պաղ ջուրի
մէջ լեցուցէք, կրկին քամեցէք և ձեր
երկու ատներուն մէջ առնելով աղէկ մը
սեղմեցէք, երբ այդ գործողութիւնը ա-

ւարտի, ամրածեցէք մաքուր տախտա-
կի մը վրայ և մաքրեցէք: Տապակի մը
մէջ դրէք քիչ մը կարագ կամ դմակ իւղ,
դգալ մը ալիւր, աղ պղպեղ, քիչ մը մսի
ջուր, և կամայ կրակի վրայ շարունակ
խառնելով 3 վարկեանի չափ եփեցէք,
և ուռուցիկ հաւկիթը իր թացանով
վրան աւելցուցէք ու կարելի եղածին
չափ տաք՝ սեղան դրէք:

ԳԵՏՆԱԽՆՁՈՐԻ ԿԼՈՐԻԿ ՀԱՄԵՄՈՒՄԾ

Առէք 12ի չափ սովորական մեծու-
թեամբ գետնախնձոր. տաք մսիկի մէջ
եփեցէք, հանեցէք և սակեցէք, սանդի-
մը մէջ ծեծեցէք, պարզուած մը անցու-
ցէք՝ որ խիւսի մը վերածուի. խառնե-
ցէք հետը 50 արամ կարագ, 30 արամ
փոշիացած շաքար, և փաթիկ կտոր մը
վանիլեա՝ նոյնպէս փոշիացած, 8 հաւ-
կիթի դեղնուց և պտղունց մը աղ: Այս
ամէնը պէտք է իրարու հետ լաւ մը
խառնել, յետոյ ընկոյղի խոշորութեամբ
գնդակներու բաժնեցէք, և ափերնուդ
մէջ կլորցնելով պղտիկ գաւազանիկնե-
րու ձևը տուէք: 2—3 հաւկիթ աղէկ մը
զարկէք, մէջը թաթխեցէք այդ կլորիկ-
ները և եռացած կարագի մէջ տապկե-
ցէք, հանեցէք և վանիլեայով համեմ-
ուած շաքարի փոշիի մէջ թաթխեցէք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԹԻԻՆԻԿ ԹԷ ԲՈՐՏԱԿ

Հանրագիտակի 43րդ թուին Խոհանոցի
Բաժնին մէջ «ուսկումի» ձկան հայերէնը
ըսուած է «թիւնիկ», հետևելով մէկ քանի
հայ. բառարաններու: Մինչդեռ Հայկազն.
բառարանը «բորտակ» կոչած է ուսկումի
ձուկը:

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԱՌ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

— 3019 —

ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 71 ԵՒ 72

Հետագայ հարցումներն կը յանձնարարենք Հանրագիտակի Յարգոյ աշխատակից մասնագէտներու ուշադրութեան:

1. «Մոչգըրոն» կոչուած հիւանդութեան դարմանը ի՞նչ է, որ ստէպ մարդուս գլխին կամ մօրուքին կամ քնչացքին մէջ կ'երևի, ուր մազ չի բուսնիր: Թէպէտ հոս մէկ երկու վարպետներ գիտեն ու կը յաջողին, տոկայն մի միայն ի նորատ իրենց օգտին:

2. Մարդու ձեռքի մատներուն եղունգներուն ստակի մատերուն վրայ յառաջ եկած «չէյթան թըրնաղի» կոչուած հիւանդութեանը ի՞նչ՞ յառաջ կուգայ, ու դարմանը ի՞նչ է ոտոր ալ: Պատասխաններուն կանխաւ չնորհակալութիւն:

Մտնիտա

Գ. ՈՒՆՁԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄ ԹԻՒ 73

Ոտքի ներքեւ գտնուած կոշտերն քարմանելու համար ի՞նչ միջոցներու և ի՞նչ դեղերու դիմելու է, խնդրեմ, հաճեցէք, Զեր օգնալուտ Հանրագիտակի միջոցաւ դիտել տալու. զի՝ խնդիրը ութ տարեկան մանկան մը շուրջը դառնալով, խեղճը կը տառապի, և հարկադրուած է այս ցուրտ եղանակներուն հոգաթափով ման գալ:

Գուշատա

Կ. Գ. ՔԷՀԵՍԵՅՆ

Ծ. ԽՄԲ. — Առ այժմ այդ մանկիկին հազցուցէք խիստ կակուղ կօշիկներ, որոնց ներքանը կազմուած ըլլայ թաղիքէ (քէչէ) և մէջի կողմն ալ վաթկայէ (տափակցած բամպակ, զոր դերձակները կը գործածեն հագուստի պատրաստութեանց մէջ) խաւ մը գտնուի: Զգուշացէք միևնոյն տուն խոնաւ տեղեր պտտցնել: Եղան, որովհետեւ կոշտերը և փապարները աւելի խոնաւ օդերու ժամանակ

օդին խոնաւութիւնը իրենց ծակտիկներուն մէջ ծծելով կ'ուռին, կը բարձրանան:

Ոտքի փապարներն և կոշտերը յառաջ կուգան հետեւեալ պարագաներու մէջ:

Երբ կօշիկը նեղ է, և ոտքին այս կամ այն մասը կը ճնշէ. — Երբ չափազանց լայն է, և քաղուած ատեն ոտքին ու է մէկ մասին հետ շփում մը տեղի կ'ունենայ. այս վերջի պարագային մէջ փափաղը աւելի վերքի մը կը փոխուի: — Երբ կօշիկին ներքանը խիստ բարակ և կարծր ըլլայ, և մոծաւորի հիւթակային տոքն ալ շատ փափուկ եղած ըլլայ, այն ատեն՝ ոտքի ներքանը փապարով կը ծածկուի: Ծառ հաւանակուն է որ ձեր մանկիկին ստից բապարներն ալ այս պարագային մէջ յառաջ եկած ըլլայ. — Երբեմն ալ կը սքաւտահի որ, կօշիկին թէ՛ ներքանը և թէ՛ երեսը բարակ ըլլալով հանդերձ, տձե կամ նեղ կ'ըլլայ. այս պարագային մէջ ալ, ստից ներքանը բապարներով և մատնոսկրներն ալ կոշտերով կը ծածկուին:

Կոշտերը կամ փապարները պարզապէս ոսկորներու մօտ գտնուող մարթի ու է մէկ մասին ճնշման ենթարկումի հետեւանքն են: Մորթը երբ իր մէկ մասին վրայ ճնշում մը կը կրէ, հոն յօրինուածային խանգարում մը, հետեւաբար և խոթարում մը տեղի կ'ունենայ. արիւնը դէպի հոն կը խուժէ, և երբ սրտաճառը մեջտեղէն վերցած ըլլայ, բուժումը կը յաջողէ. հակառակ պարագային, մարթի այդ մասը կ'սկսի չօրնալ և կարծրանալ հետզհետէ, և որչափ ճնշումը շարունակէ, այնչափ այդ կարծրացած մասը կը թանձրանայ խաւ առ խաւ, որոնք եղբրքէն դէպ ի կեդրոնը կը գոգաւորին: Ոսկորին անմիջապէս վրան և մորթին տակը գտնուած մասին մասին մէջ արմատ մը կը գոյանայ, որ վերի կոշտի խաւերէն կը գտնուի՝ միջանկեալ մարթի ներքնաթաղանթով. խիկ կոշտերուն կեդրոնն ալ սուսկի ձեւով ընդհանրապէս՝ մակաճոյթ մը յառաջ կուգայ, որու գլուխը կոշտի վերնախաւին վրայ կը տարածուի, և կարծր կազմութիւն ունենի. խիկ կոշտը՝ երթալով կոշտի խաւերը կը ճնշէ, կեդրոնէն դէպի ներս կը մխրձի, և երբ միջոցէն ճնշում մը կրէ, ինքն ալ փոքրագոյն ձաւար բուն արմատը կը ճնշէ. տհա ճիշդ այս պարագային է որ շատ անգամներ ան-

տոնիքի ցուեր յառաջ կուգան, որովհետեւ, արձառը բարձրագին մոգանոցն կենդանի եւ գործօն մասին մէջ գտնուելուն, խորոյն իր տաղած ճնշումը իր շուրջը կը ստարածէ:

Եւրոանը հաստ, երեսը կտրուել է ճիշտ սաքերու չափով ձեւաւոր կոշիկներ հագէք, ե ջանացէք 2 կամ 3 քայլ կոշիկ ունենալ եւ հապելով փոփոխ փոխ, այն տունն ահա, զերծ կը մնաք սաքի կիշտերէ:

ՀԱՐՅՈՒԹ ԹԵՒ 74

Իբրեւ հետաքրքիր ուսանող մը Մարդա-կազմութեան եւ կենդանաբանութեան, կ'ուզեմ սովորիլ Ձեր օգտաւատ թերթի միջոցաւ ակաւայի կազմութիւնը, այսինքն թէ անոր ինչպէս շինուիլը եւ թէ ինչպէս իյալս գալը:

Պարտիզակ

ՆՇԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՐՅՈՒԹ ԹԵՒ 75

... Խմբագրաւորեալ,

Հանրագիտակի անժխտելի օգտակարութենէն Գարթալցիներուն ալ բաժին մը խընդ-րելու գիտումով, հետեւեալ հարցումը կ'ուզեմ Պատ. Խմբագրութեանը:

Գիւլիս պարտէզներուն բալի եւ կեռասի ծառերը ոչնչացնող սրգերը ինչպէս ոչնչացնուէ:

Ասիկ 15—20 տարիներ առաջ գիւլիս չոր-ջակալը գտնուող բալի եւ կեռասի ծառերը շատ երկար տարիներ տնօրէն կը մնային. սակայն վերջիչեալ տարիներէն սաքին ցան-ուած ծառերէն հազիւ հազ կարելի կ'ըլլայ 3—4 տարի պտուղ ստանալ, անկէ վերջը ծառերը յսկոն չորնալ, եւ անոր ալ պատ-ճառը վերոյիշեալ սրգերու գոյութիւնն է, որոնք ճշմարիտ պատուհաս մը եղած են գիւլիս պարտիզականներուն գլխուն:

Այդ սրգերը 8—9 աննթիւմ երկայնու-թիւն ունին փոքր եղած ատեննին, որոնք հեռուէնէ կ'արմար գոյն մը կ'առնեն:

Սրգերը ծառերուն արմատին որեւիցէ մէջ մածոն ենք մոնելով, ծառին հիւթը կ'ապա-ռեն, որուն անմիջական հետեւեալը կ'ըլլայ ծառին չորնալը: Ինչպիսի պտուղները հասցու-նելու ատենները:

Գիւլիս պարտիզականները, որոնք իրենց արհեստին մէջ բնական փորձառութիւն ու-նին, միեւի միջոց մը գտնո՞ն են ծառերը մէկ երկու տարի ունի սպիւնայնելու. այդ միջոցն է Պարտիզա առաջ մէջ ծառերուն արմատնե-րը բռնալ, որդերը մաքրել, եւ այսպէս բնա-ւորական տունն արմատները բնոց ձգելէ յետոյ, ուրիշ տեղերէ մաքրել հոգ բերելով, կրկին կը գոյնն արմատները: Մտկայն, քանի որ այս կերպով կարելի չ'ըլլար արմատներուն խորքը մտած սրգերը մաքրել, հետեւեալ կատարե-ալ սրգիւնը մը ձեռք չի բերուիր:

Ուրեմն յաւանդից կը դիմեմ Պատ. Խմբագրութեանը, որմէ՞ վստահ եմ թէ սղ-տակար դարման մը պիտի հնդորդուի հան-րօգուտ թերթիդ միջոցաւ:

Գարթալ

Ե. Յ. ԷԹՄԷԼՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ. — Ձեր ըսած սրգերուն ա-ռաջը առնելու համար թէ եւ կան միջոցներ, բայց պէտք է որ բոլոր չրջակայի պարտիզ-ականները մէկէն ձեռնարկեն, որովհետեւ մէկ պարտիզական մը պէտք եղած ծառերը կ'ը-նէ, կը դարմանէ իր ծառերը եւ կ'ազատէ վստանք այդ սրգերու ասպտոտակութենէն. բայց վստահ եղիք որ, եթէ ոչ նայն տարին՝ գէթ երկրորդ տարին անպատճառ ուրիշ սր-գեր՝ իր դրացիներու պարտէզներէն խուսը խուսը գէտի հոն պիտի դիմեն, եւ բոլոր իր աշխատութիւնները եւ բրած ծախքերը վրայ տուած պիտի ըլլայ: Ինչ որ է. Ձեր պար-տիզականները կրնան հետեւեալ միջոցը կի-րարել:

Ծառերուն արմատները բանալէն վերջը փոխանակ դուրսէն նոր հող բերելու, իա-ղախորդարաններու (տապաղհանէ) մէջ կաշի-ները տապարելու (տապաղամաք) ծառայող գիտորի (մալը), կաշիի կեղեւի (մէջէ գա-պուղը) կամ խոզկաղինի (փալամուտ) փաշի-ները (զորս անգործածելի դառնալէ վերջ կը նետեն) պէտք են գործածել. այս ըսածներս կ'ընան գտնալ Եթէ Գիւլիս ծառից երբ, ուր շատ մը խաղախորդականներ կան, եւ Գար-թալցից համայն ալ շատ գիւլիս է ձեռք բե-րել, քանի որ իրենց բանջարեղէնները մա-կոյկներով Պոլիս կ'իջեցնեն, որոնք վերա-դարձին փոխանակ մարտալ մեկնելու, կը մեղմեցնեն Եթէ փալամուտէ ծառից, եւ այդ

տնտեսական կրթությունը կը տանին Գարթալ:

Բայց այդ տնտեսական (տան) պարունակող նիւթերը պէտք չէ իրենց բնական վիճակին մէջ գործածել: Ծառերու արմատներուն վրայ դնելէ առաջ բացօդեայ տեղ մը կուտակելու են, կարգ մը տնտեսական, կարգ մը կիր (քիւլճ) խառնուրդ, և այսպէս մէկ ու կէս երկու վէժի բարձրութեամբ կոյս մը շինելու են, ուր կը թողնեն երկու ամիսի չափ, բայց մինչև այդ միջոցին պէտք է 3—4 անգամ կոյսը փոխել, լաւ մը իրար խառնել, և նորէն դիզել: Նկատուած թեան տունելու է նաև որ, տնտեսական չոր չըլլայ, և այդ պարագային կը հասկնաք անշուշտ թէ ինչ պէտք է:

Ասկէ վառ պէտք է առնէք փոշիացած «նափթալին», զոր կը ծախեն Պոլսոյ գեղավաճառները՝ քաջը 3—4 գահեկանի:

Իւրաքանչիւր ծառի տակ վերայիշեալ տնտեսական կը դնեն վեր ի վերայ 5—10 քաշի չափ, որու հետ կը խառնեն 50—100 սրամի չափ ալ նափթալին, և յետոյ ամրոցը կը ծածկեն հողով:

Բայց այսչափով չի կրնար, պէտք է ձմրան վերջերը կրպտուել (պատանայ) ամբողջ ծառերը, որպէս զի՝ անոնց ճեղքերովքներուն մէջ գտնուած ամէն տեսակ միջատներու, ճճիներու հաւկիթները ոչնչանան. այս մասին երկարօրէն գրած ենք արդէն Հանրագիտակի 26րդ թւոյն մէջ, ուրիշ կըրնաք քաղել հարկ եղած տեղեկութիւնները ընդարձակօրէն:

Նափթալինին հետ եթէ քիչ մը մսիկի և ձանձախարիթ (օճաղ գուրումը) ալ խառնէք, աւելի արդու կ'ըլլայ. ինչպէս և ծրիախտի արտամուղ (պատրաստութիւնը տես Հանրագիտակի 10) սրամիկ օճաղ, ջուրի հետ խառնելով բաղադրութիւնը ջրել:

Ազնիւ բարեկամ,

Պիտի հաճի՞ք կարգ մը յօդուածներ ևս այգեգործութեան, այսինքն՝ լաւ որդատունիկեր յառաջ բերելու, զանոնք խնամելու մասին գրել: Մեզ համար մեծ շահեկանութիւն ունին այդ կարգի յօդուածներ, քանզի քաղաքս հինգ հազարի չափ այգիներ ունի, որոց հազիւ 200ը սարսուած արդիւնքը կը

տան, մնացեալներուն համար եղած աշխատութիւնն ու վատնուած դրամն ի զուր է: Այս մասին Ձեր բարի արտահայտութեանց անհամբեր կ'սպասենք: Վստահ եղիք որ մեծ և անխնայարկներ թարիք մը մատուցած պիտի ըլլաք և առ յաւէտ պիտի յիշուիք:

Մնամ յարգանք

Մարգարան

Ա. Կ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ

Ծ. ԽՄԲ. — Հաճութեամբ սխտի պատասխանենք նաև Ձեր հարցումին, միայն թէ մեր կողմանէ ևս փափաքելի պիտի ըլլայ որ, Հանրագիտակին ալ Հանրագիտակի պէս Հանրագումարութիւն մը հանրացնելու ամէն կարելի ջանքեր ի գործ դնէ: Երբ այսպէս կ'ըսենք, մի՛ կարծէք որ մեր թերթը շահագիտական գործի մը դարձնել է նպատակին, այլ ընդհակառակը, թէ՛ անկաւ ընդհանրանալով՝ ժողովուրդի մեծագոյն մասը կրնայ օգտուել իր պարունակութիւններէն և թէ թերթին նիւթական վիճակը բարւոքելով, կարող կ'ըլլանք մենք ալ աւելի ճոխ նիւթեր մատակարարել ժողովուրդին, և ամէն հարցումներուն ալ ժամանակին պատասխանելով, իրենց փափաքանայ գոհացում տուած կ'ըլլանք, և հետեւաբար նոյն իսկ իրենց անձնական մեծագոյն օգտին՝ հանրային շահերուն համար:

ԱՐՔԻՍԵՏԵՍԻ ԼԾԱԿԸ

Կը պատմուի թէ Արքիմեդէս ըսած ըլլայ. «Տուէ՛ք ինձ լծակ մը, և յենակէտ մը ցուցուցէք որ ես աշխարհը տեղէն իսխտեմ» քիչ մը վեր վերցնեմ:

— Բան մը չի հասկցանք, աշխարհը տեղէն իսխտեմ, վեր վերցնեմ ինչ ըսել է, այնպիսի գիտուն մը այդպիսի յիմարական խօսք ընէ:

— Մեքենագիտութեան մէջ ապացուցուած է թէ, երբ լծակ մը իր մէջտեղի կէտին հաստատուի յենարանի մը վրայ և երկու ծայրերը ծանրութիւններ դրուին, լծակը նոյն

գլխին մէջ մնալու համար ծանրութիւններն հաւասար լինելու են, այս յայտնի է. իսկ եթէ լծակը, օրինակի համար, իր երկայնութեան $\frac{3}{5}$ կէտէն հաստատուի, ծանրութիւնը լծակի շաղակներուն երկայնութեան հետ խոտոր ուղիղ համեմատին. այսինքն երկայն թաղակին ծայրը դրուած 6 օխա ծանրութիւնը կրնայ կարճին ծայրը դրուած 10 օխա ծանրութիւնը հաւասարակշռել: Արքիմեդէս ալ իր ըսածովը մեքենագիտութեան սկզբունքը հաստատել կ'ուզէ:

Իմանալու համար թէ գիտունին ուզած լծակին երկայնութիւնը ո՞րչափ լինելու է, նախ պէտք է գիտնանք թէ տեղէն չարժեք ուզած աշխարհին ծանրութիւնը ո՞րչափ է:

Արդէն գիտենք որ աշխարհն գնդակերպ է, հասարակածին կողմը քիչ մը ուռած, բեւեռներուն կողմը տափակ. և թէ հասարակածի շառաւիղն է 6,376,984 իսկ բեւեռինը 6,356,324 մեթր. ասոնց միջինը կ'ընէ 6,366,654 մեթր:

Գունդի մը ծաւալը գտնելու համար պէտք է շառաւիղին խորանարդը 4,18879-ով բազմապատկել. աշխարհիս ծաւալն է ուրեմն

$$4,18879 \times 6366654^3$$

$= 107960000000000000000$ խոր. մեթր (աջ կողմէն կարգ մը թուանշանք վրձնէրու փոխուած են դիւրութեան համար):

Երկրի տեսակարար ծանրութիւնն է 5,44, մէկ խորանարդ մեթրն ալ 1000 քիւ կը կըշռէ եթէ ջուր լինի, ուրեմն վերի թիւը 1000-ով և 5,44-ով բազմապատկենք, կ'ունենանք

$$107960000000000000000 \times 1000 \times 5,44 =$$

$$= 587300000000000000000000 \text{ քիւկրամ}$$

զոր օխայի վերածելով կ'ունենանք

$$458000000000000000000000 \text{ օխա:}$$

Հիմա դիցուք թէ յենարանը երկրէն միայն մէկ մեթր հեռու պիտի դրուի և այդ ծերուկը որ միւս ծայրը պիտի գործէ զօրութիւնը 60 օխա սեպենք, այն ասոն լծակին երկայնութիւնը կ'ըլլայ

$$458000000000000000000000 : 60 =$$

$$= 763400000000000000000000 \text{ մեթր երկնիքն.}$$

Այս այնպիսի երկայնութիւն մ'է որ չէ կարելի երեւակայել. չենք կրնար օրինակ մը

ցուցնել, այլ 'ուզենք մի քանի օրինակներ մէջ բերել անոնք, անկարելիութիւնը բացատրելու համար:

1.—Եթէ Ադամ թնդանօթ մ'արձակէր, մինչև ցոյժմ ուռմբը անոր 300 միլիոն մասին մ'ը հազիւ գացած կ'ըլլար:

2.—Լծակին ծայրը եթէ լոյս մը գոնակէր լոյս աշխարհ հասնելու համար 8 միլիոն տարիէն աւելի ժամանակ պէտք էր:

3.—Աշխարհիս ցամաքի մասը եթէ ամբողջ իստ անտառ լինէր այնպիսի բարձր ծառերով՝ որոց գագաթները յուսնին հասնէ՝ այդ ծառերն իրար կցելով տակաւին լծակ երկայնութիւնը չենք ունենար:

4.—Եթէ լծակի երկայնութեամբ ամենաբարակ թել մը, ինչպէս է դարդի ոտտայնի թելը, կծիկ ընելու ըլլանք, համարելով թէ քիլովթրը մէկ ցորեն կը կշռէ՝ կ'ունենանք այնպիսի ահագին գնտակ մը՝ որոյ շուրջը 15 ժամէն մարդ մէկ անգամ չըջան չի կրնար ընել:

5.—Աշխարհն՝ ստեղծուելէն ի վեր տակուն այդ լծակին երկայնութիւնը ցուցնող թւոյն չափ ցորեն չէ բուսուցեր:

6.—Տպագրութեան գիւտը ըլլալէն ի վեր ամէն լեզուներով տպուած գրքերուն և կրագիրներուն գիրը դեռ այդչափ չէ եղած:

Այս խնդիրէն սորվեցանք աշխարհիս ծանրութիւնը, որ 458000000000000000000000 օխա է, և պիտի կարգաւ եթէ բան գործ չունիս:

Դրադէտք յաճախ ակնարկութիւն կ'ընեն այս լծակին. մարդ մը որ իր գործերուն մէջ աշխուրջ է և աղէկ յաջողութեան մէջ, կ'ըսուի թէ Արքիմեդէսի լծակն ունի. նոյնպէս, մարդ մը որ ձեռնարկած գործին բոլորովին անյարմար է և ապիկար, հեգնօրէն կ'ըսուի թէ Արքիմեդէսի լծակը գտեր է:

Տ. ՊՕԶՔԱՆԻՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մանան.—Ս. Գ. Քէչէճեան էֆ.—Շնորհակալութեամբ ոտացած ենք նամակնիդ եւ իր պարունակութիւնը. ձեր հարցումին ի մօտայ կը պատասխանենք. վայելչազարգութեան Բաժնի հրատարակութեան տակուն ձեռնարկած չենք. երբ հրատարակենք, կը լրկենք ձեզի նմա մը:

Մանան.—Ս. Յրգանեան էֆ.—Հոտ Ձեր քաղցին, դանձած ենք Ս. Դաւթեան էֆ. 42 դահեկան, և Ձեր հաշոյն անցուցած ենք. ընկալագրելը կը լրկենք. զտաղմանց պատճառաւ է որ ցարդ չգրեցինք. նոր բաժանորդներու թերթերը կը լրկենք:

Բալիդ.—Տ. Տօղրամանեան էֆ.—Շնորհակալութիւն. մէկ օրինակ Հանրագիտակ կը լրկենք Մաղաթիոյ Ազգ. վարժարանին:

Բէսապ.—Ստացած ենք նամակնիդ. Ձեր թերթերը հաշւաւ զրկուած են, ինչպէս եւ երկու նամակներ. եթէ պրտցած չէք, տեղեկացուցէք մեզ. Օգոստոս և Յուլիոստար կ'սպասուք թղթարկէն:

Պարտիզակ.—Երուանդ էֆ. Փոփաւեան.—Գրկուած են Ձեր պակաս թիւերը. թթեհիլ մասին տուած տեղեկութիւննիդ գահացուցիչ է:

Ստուենի.—Կրնաք լրկել Ձեր յօդուածնիցը. Հնկալադիր կ'ստանաք:

Սիւլվիլի.—Մ. Կ. Մալաքեան էֆ.—Ի մօտայ կ'պատահենք. նամակնիդ մի' ուշացնէք:

Նիկոմիդիա.—Հաշիւը կ'ստանաք ընդ հուպ. զգա՞ք թերթերնիդ, 1—33 զրկեցինք:

ԳԱՇԻՐԷՑԻՆԵՐՈՒՆ

Գաւաթ մը տաք թէյ, ուրիշ ու է ըմպելիքէ աւելի մարդու ծարաւը կ'անցնէ և կը գովացնէ. ուստի՝ երբ չափազանց ծարաւած ըլլաք, փորձեցէք զայն անցնել տաք տաք գաւաթ մը թէյ խմելով: Անգղիացիք բաժգիտնալով թէյի այս օգտակար յատկութիւնը

Փահրէի պէս տաք երկրներ դանուած տտեննին, ուրիշ ու է ըմպելի չեն գործածեր զտախալու համար: Արդէն՝ Մայրագոյն-Լարեկցիները տաք եղանակներու մէջ զովանալու համար տաք ջուրի լոգանքներ կ'ընեն. և թէյատուեննրու մէջ ալ, ամեն յաճախորդի քով ամանով մը ջուր և անձեռոց մը կը դրուի, զոր ջուրին մէջ թաթիւելով, կը սրբութի, զովանալու համար:

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ էֆ. այս անգամ Գաւաթի մէջ թէյի վաճառանոց մը հաստատած ըլլալով, կազմայ Արգոյ հասարակութեան յայտարարել թէ, ամեն միջոց ձեռք առած է իւր Պատ. յաճախորդները գոհացնելու համար:

Գ. Իսաղուլեան էֆ. ի վաճառատուն մէջ կը գտնուին, Պոլսոյ հանրածանօթ Կ. Նալբուեան և Յ. Իսաղուլեան էֆ. ներու փաճառատան ամեն տեսակ ընտրեալայն թէյերը, և կը ծախուին միւսնոյն գներով:

ՄԵՐ ՀԱՍՑԵՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ կ'ստորագրէ մի միայն Տնօրէն-Ստորագրապետ Ղ. ԲՈՂԱՏ, որու գիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամեն գործառնութեանց համար:

درعايهاده بفتحه قوسنده اسكي ضبطيهاده
۱۹ نومرولى دكانده «مجموعه علوم» غزتهسى
سر محررى (بولاد) اقدىيه

Ղ. Բոլատ Տնօրէն-Ստորագրապետ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ
H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ԼՈՒՍԻՆԿԱՆ

գատար իշխողատ էլէտի քի, գալարում վէ
քիրիւքէրիւմ տէօքիւլաի. շիւտիյէ գատար
պիր չօգ մահալլէրտէ թէտալի օլունմը խէմ
տէ, մէգքիւր խաւթալլու պիր չարէճըղազ
ումըպլամա իքէն, պու քէրիւք Զարէճըղազ
Պէկէիկէզ մահալլէտիւտէ Հաճը Բեամիլէ Հա-
նըմըն խաւթալլուտէ Տօպրուճանըն Բէօսթէնճէ
էհալիսիւտէն Հիւսէիլն էֆէնտի նամ զաթըն
իւլէմ մէգքիւրէ հազգընտա խիզազաթը թա-
միյէ վէ մէհարէթը քեամիլէտի օլտուղը խապէր
վէրիւքէտի իւզրէ, իէճա միւնէթ պիւ վաւը-
թա միւրաճաաթ խտէթէք, միւմալլէյհին պու
պապուտէ խիզազաթը թամիյէ վէ մէհարէթը
քեամիլէտիւյէ օլունան թէտալլուտէն, պիւ
լութիքը թէպա, պիր գալ կիւն զարթընտա
մահուտ խաւթալլուտէն քեամիլէն, Բաւեապ
օլտուղըմ կիւլի, ապա զահմէթ վէ քէտէր
էքմէյէրէք թահլիս օլտուղըմ, Ալահա չօգ
չիւքիւրէր օլտուն. տօլրուը թապէ հայեաթ
պախչ օլտում, վէ օլպապուտէ մէգքիւր է-
ֆէնտիլիս սուհալէթը սէրիյէ շայանը թազ-
տիր օլտուղընտան, իւզու թէէէքքիւրնամէմ
իթա վէ իւն խտէրիւմ: Սամաթիալը
ԱՐՏԱՇԷՍ ՄԵԼԻՔՈՆԵԱՆ



Թ Է Յ Ը

ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԸՆՏԻՐ ԵՂԱՆԱԿ ՄԸ

Զինաստանցիք թէյը կը պատրաստեն
նոյն ինքն խմուած գաւաթին մէջ, հե-
տեւեալ կերպով, զոր կը յանձնարարենք
մեր ընթերցողաց իր գիւրթութեան և օգ-
տակարութեան համար:

Գաւաթին մէջ կը դնեն նախապէս
պտղունց մը թէյ, եռացած ջուրը վրան
կը լեցնեն, և իսկոյն գաւաթին տակի
պնակը վրան կը ծածկեն, անշուշտ շա-
քարը դնելէ յետոյ. թէև Զինացիք թէյը
առանց շաքարի կը գործածեն: Թէյի
ջնաթութումը պատրաստուած կ'ըլլայ,

երբ տերեւները գաւաթին յատակը իջ-
նան: Եւ մոռնանք ըսելու թէ՝ Զինացիք
երբ այս կերպով ի պատրաստեն իրենց
թէյը, առանց պէ՛տք գաւաթին վրայէն
վերցնելու, մէկ եղերքէն կը խմեն, որ-
պէս զի հոյը մէջը մնայ:

Կ. Երպրուեան և Յ. Իսաբուլեան
Տեարց վաճառատան մէջ ծախուած թէ-
յերը Արգոյ հասարակութեան մասնաւոր
ուշադրութեան կը յանձնենք, որոնք
հրապարակը գտնուածներուն մէջ, իրենց
տեսակի ազնուութեամբ և գիներու ա-
ժանութեամբ անմրցելի եղած են: Կեղ-
ծերէն զգուշանալու համար, գիմեցէք
ուղղակի Ընկերութեան Կեդրոնատեղին,
Կ. Պոլիս, Ճեղք-Պէյ խանի տակ, 10 թիւ

Տ Զ Դ . Բ . ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆՍԱՅԱԲՈՅԺ, ՄԱՍՆԱԳԷՏ

ՋՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծա-
նօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսում-
նասիրութիւններ կատարելէ զկնի ի Բա-
րիզ, զարձած է մայրաքաղաքս, հան-
տատելով իր բնակութիւնը Բերա Մէք-
թէպ-Պայրամ-Փողոց, թիւ 29, ուր ամէն
օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի:
Մասնաւորապէս կ'զարմանէ կնոջական և
ջղային ամէն հիւանդութիւններ: ԵՇ.
նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարծա-
եալները: Եւէքարաբուժում ամէն տե-
սակներովը, մասնաւոր քննութիւն
Ռէնօթկէնեան մեքենայով:

ՀԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ
ՎԱՅԵԼՋԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Ղ . ԲՈԼԱՏ

Խմբագրապէտ Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 Էսկի-Ջապիէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը,
հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թեր-
թիդ վայելչազարդութեան բաժնին
և

Ստորագրութեան

(Ընթերցող)

1898

Բնակութեան տեղ
Հասցէ

ՄԵԾ ՄԹԵՐԱՈՅ ԴԵՂՈՐԵՒՅ

Լ. ԱՐՄԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԷ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատունն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ միջերէ մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆրնտգլեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի Նորվեգիայէն բերել տրուած ամենալնտիր ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գիններով:

Կը ղրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃԵՄԱՐԻՏ և ԱՆԻՍԱՐԴԱԽ Մօռլու ձկան իւղ չի գրտնըւիր. սյս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող դիմեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆրնտգլեան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի Նորվեգիայէն բերել տրուած ամենալնտիր ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գիններով:



ԳՈՐԾՍԿԱԼԻ

ՀԱՆՐԱՊԷՏԱՆԻ



Ասա-բազար — ժտեփան էֆ. Սափրիչեան
Արաբիի — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բարսեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալճանեան
Իզմիս — Արրահամ էֆ. Կ. Կտուճեան
Մալկաւա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խաբեբդ — Խոսրով էֆ. Քէչիչեան
Թեհապոյի — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սինոպ — Յ. էֆ. Պետրոսեան

Կրտում — Արմենակ էֆ. Սօմունճեան
Մառու — Ս. Տ. Յովհաննէս քահանայ
Պարմապետեան
Մանչեսթըր — Յուրդ էֆ. Բոլատեան
Պանսրմա — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Տրապզոն — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կեիիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար — Արտաշէս էֆ. Հալսլեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մագրի-Գիւղ, Պողոս էֆ. Ազնաւորեանի խանութը,
Դատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Դեմ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: